ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին Բաղրամյան համայնքում իրականացված աշխատանքները միտված են եղել համայնքի համաչափ տարածքային զարգացմանը, կենսական ենթակառուցվածքների արդիականացմանը, սոցիալական կայունության ապահովմանը և երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի հիմքի ձևավորմանը: Տարեկան աշխատանքային պլանը իրականացվել է համակարգված կառավարման, ֆինանսական կարգապահության և պետական-համայնքային համագործակցության սկզբունքներով:

1. Ենթակառուցվածքներ

2025 թվականի ընթացքում ենթակառուցվածքային զարգացման հիմնական առանցքը հանդիսացել են սուբվենցիոն ծրագրերը, որոնք իրականացվել են պետական բյուջեի և համայնքային համաֆինանսավորման սկզբունքով:

Սուբվենցիոն ծրագրեր

Համայնքում իրականացվել են 16 խոշոր ծրագրեր՝ ուղղված ճանապարհային ցանցի բարելավմանը, գազաֆիկացմանը և ոռոգման համակարգերի կառուցմանը:

Ճանապարհաշինական ծրագրեր (14 բնակավայրերում)

Ասֆալտապատվել են համայնքի տարբեր բնակավայրերի կենտրոնական և երկրորդական նշանակության փողոցներ՝

Լեռնագոգ՝ Ա. Խաչատրյան փողոց

Արևադաշտ՝ Գ. Չաուշ փողոց

Վանանդ՝ Զ. Սահակյան փողոց (1-ին հատված)

Բաղրամյան՝ Արցախի փողոց

Դալարիկ՝ Մյասնիկյան, Շահումյան, Մ. Գորկու, Մ. Մաշտոց փողոցներ

Քարակերտ՝ Աբովյան, Նալբանդյան փողոցներ

Շենիկ՝ Ե. Չարենց փողոց

Հուշակերտ՝ 5-րդ և 6-րդ փողոցներ

Արգինա՝ Տիգրան Մեծ փողոց

Արտամետ՝ Գարեգին Նժդեհ փողոց

Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմել է 480. մլն. (չորս հարյուր ութսուն միլիոն) ՀՀ դրամ , որից՝ 191 մլն. (հարյուր ինսունմեկ միլիոնը) ՀՀ դրամը համաֆինանսավորվել է պետական բյուջեից, իսկ 280 մլն (երկու հարյուր ութսուն միլիոն) ՀՀ դրամը՝ համայնքի միջոցներով: Արդյունքում՝

Բարելավվել է տրանսպորտային հասանելիությունը,

Նվազել են ավտոմոբիլային վնասները,

Ապահովվել է բնակչության անվտանգ տեղաշարժ,

Բարձրացել է համայնքային գույքի արժեքը:

Գազաֆիկացում

Բագարան, Երվանդաշատ և Կողբավան բնակավայրերում իրականացվում է գազաֆիկացման խոշոր ծրագիր՝ շուրջ 399 մլն դրամ ընդհանուր արժեքով: Ծրագիրը լուծելու է բնակչության կենսական խնդիր՝ ապահովելով էներգետիկ կայունություն և սոցիալական պայմանների էական բարելավում:

Ոռոգման համակարգ

Լեռնագոգ բնակավայրում կառուցվել է սնուցող ոռոգման ջրագիծ (ընդհանուր արժեք՝ 150 մլն դրամ համաֆինանսավորմամբ): Ծրագիրը ռազմավարական նշանակություն ունի գյուղատնտեսության զարգացման համար և ապահովում է ջրի արդյունավետ բաշխում:

Վերոնշյալ բոլոր ծրագրերն իրականացվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի, սեյսմիկ և տեխնիկական փորձաքննությունների, հեղինակային և տեխնիկական վերահսկողության ապահովմամբ՝ պահպանելով շինարարական և որակի չափանիշները:

2. Սոցիալական ոլորտ

2025 թվականին սոցիալական քաղաքականության ոլորտում կատարվել են կառուցվածքային փոփոխություններ:

Դրամական ուղղակի օգնության ծրագիրը դադարեցվել է՝ անցում կատարելով նպատակային և իրավիճակային սոցիալական աջակցության մեխանիզմի: Համայնքապետարանը սահմանել է աջակցության գործիքակազմ՝ բնական աղետների, արտակարգ դեպքերի կամ չնախատեսված ռիսկերի հետևանքով վնասներ կրած ընտանիքների համար:

Այս մոտեցումը ապահովում է.

ռեսուրսների նպատակային բաշխում,

սոցիալական արդարության պահպանում,

համայնքային բյուջեի արդյունավետ կառավարում:

3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն

Համայնքում իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ՝

վտանգավոր տարածքների մշտադիտարկում,

աղետների դեպքում օպերատիվ արձագանքման մեխանիզմների մշակում,

համայնքային կառույցների պատրաստվածության բարձրացում:

Արտակարգ իրավիճակների դեպքում սոցիալական աջակցության ծրագրի կիրառումը ապահովում է արագ արձագանք և վնասների մեղմում:

4. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսական ոլորտը համայնքի տնտեսության հիմքն է: 2025 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գյուղատնտեսական նշանակության հողերի գործառնական նշանակության փոփոխության գործընթացների կազմակերպում,

Խորհրդատվական աջակցություն գյուղատնտեսական հարցերով,

Մկնասպան և պաշտպանիչ դեղամիջոցների տրամադրում,

Սերտ համագործակցություն համայնքի վարչական տարածքում գործող խոշոր այգեգործական տնտեսությունների հետ:

Ոռոգման ջրագծի կառուցումը լրացուցիչ խթան է հանդիսանում գյուղատնտեսական արտադրողականության բարձրացման համար:

5. Շրջակա միջավայրի պաշտպանություն

Իրականացվել են համայնքային մաքրման և սանիտարական աշխատանքներ, կանաչապատման նախաձեռնություններ և աղբահանության կազմակերպման շարունակական գործընթացներ: Միջավայրի բարեկարգումը դիտարկվել է ոչ միայն էկոլոգիական, այլև սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում:

6. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

Քաղաքաշինական ոլորտում իրականացվել են՝

Ապօրինի և ինքնակամ շինությունների օրինականացման վերաբերյալ տեղեկատվական և իրավական խորհրդատվություն,

Կոմունալ ծառայությունների համակարգված վերահսկողություն,

Բարեկարգման աշխատանքների կազմակերպում:

Այս ուղղությամբ աշխատանքները նպաստել են տարածական կարգապահության և իրավական մշակույթի ձևավորմանը:

7. Կրթություն

Համայնքում գործում է 10 մանկապարտեզ, որոնք 2025 թվականին աշխատել են բնականոն ռեժիմով:

2025 թվականին վերանորոգվել է Բաղրամյան գյուղի մանկապարտեզը, որը 2026 թվականին կգործի՝ ապահովված անհրաժեշտ բոլոր պայմաններով: Ապահովվել են

կրթական միջավայրի անվտանգության, սանիտարահիգիենիկ և նյութատեխնիկական պահանջները:

Համայնքի կրթական հաստատություններում շարունակվել է որակյալ նախադպրոցական կրթության ապահովումը:

8. Մշակույթ և երիտասարդության հարցեր

Համայնքում գործում են ակտիվ երիտասարդական խմբեր և տարածքներ, որոնք 2025 թվականին համագործակցել են համայնքապետարանի հետ՝

համայնքային ծրագրերի մշակման,

հանդիպումների կազմակերպման,

առաջարկությունների ներկայացման,

նախաձեռնությունների իրականացման ձևաչափերով:

Երիտասարդության ներգրավվածությունը համայնքային կառավարմանը նպաստում է մասնակցային ժողովրդավարության ամրապնդմանը և սոցիալական կապիտալի ձևավորմանը:

9. Զբոսաշրջություն

Բաղրամյան համայնքը ընդգրկված է մի շարք տարածաշրջանային զբոսաշրջային ծրագրերում: 2025 թվականին իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ, որոնց տեսանելի արդյունքները կարձանագրվեն 2026 թվականին:

Առանձնահատուկ շեշտադրում է կատարվում գյուղատնտեսական տուրիզմի զարգացման վրա՝ համայնքի գյուղատնտեսական ներուժի և ավանդույթների հիման վրա:

Եզրակացություն

2025 թվականի ընթացքում Բաղրամյան համայնքում իրականացված աշխատանքները բնութագրվում են ռազմավարական մոտեցմամբ, ենթակառուցվածքային լայնածավալ ներդրումներով և սոցիալական պատասխանատվությամբ:

Սուբվենցիոն ծրագրերի իրականացումը, կրթական և սոցիալական ոլորտների կայուն գործունեությունը, գյուղատնտեսության և երիտասարդական նախաձեռնությունների խթանումը հիմք են ստեղծում համայնքի երկարաժամկետ և կայուն զարգացման համար:

Համայնքապետարանը շարունակելու է առաջնորդվել հաշվետվողականության, թափանցիկության և մասնակցային կառավարման սկզբունքներով՝ ի նպաստ համայնքի բնակչության բարեկեցության բարձրացման: